ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023

Թեմա՝ «ԱՎՏՈՐԻՏԱՐ ՌԵԺԻՄԻՑ ԱՆՑՈՒՄԸ ԴԵՊԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ»

Առարկա՝ Հասարակագիտություն

ՈՒսուցիչ՝ Գրիգորյան Քրիստինա

Ղեկավար՝ Հայրապետյան Արմեն

Գյումրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

ԳԼՈՒԽ I.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆՈՐՈՇՈՒՄԸ----------5

1.1. ԱՎՏՈՐԻՏԱՐԻԶՄ----------9

1.2. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ----------11

ԳԼՈՒԽ II.

ԱՆՑՈՒՄԸ ԱՎՏՈՐԻՏԱՐԻԶՄԻՑ ԴԵՊԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ----------15

ԳԼՈՒԽ III.

ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ----------21

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------27

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------30

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը-Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր երկիր, պետություն՝ ունի իր քաղաքական վարչակարգը, որով պայմանավորված է՝ քաղաքական նպատակները և դրանց հասնելու եղանակներն ու մեթոդները, հասարակության մասնակցության աստիճանը՝ քաղաքական գործընթացներին: Թեման արդիական է այնքանով, որ ուսումնասիրելով քաղաքական վարչակարգերը, նրանց բնորոշ գծերը, դրսևորումները, վերլուծելով այս կամ այն պետության քաղաքական վարչակարգը, հստակ պատկերացում ենք կազմում տվյալ հասարակության քաղաքական կյանքի բնույթի մասին: Թեման արդիական է, քանի որ ներկայիս շատ ու շատ պետություններ գտնվում են քաղաքական վարչակարգի անցման փուլում: Ինչը տեղի ունեցավ ՀՀ քաղաքական վարչակարգի հետ: Ներկայիս քաղաքական համապատկերում, հատկապես արդիական է՝ ժողովրդավարացման գործընթացը և ժողովրդավարության զարգացման խնդիրը: Հայաստանի Հանրապետությունում առավել քան արդիական է: Թեման լինելով արդիական՝ դասավանդվում է՝ «Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում, ինչը հնարավորություն է տալիս աշակերտներին՝ ունենալ կայուն գիտելիքներ՝ կապված քաղաքական վարչակարգերի տեսակների, բնույթի, դրսևորումների և հետևանքների մասին:

Թեման հետաքրքրական է նրանով, որ քաղաքական վարչակարգերի դասակարգման, վերլուծման, պարզաբանման շնորհիվ, հստակ պատկերացում կարող ենք կազմել՝ առհասարակ քաղաքական վարչակարգերի կարևորության, նրանց ուրույն դերակատարության վերաբերյալ՝ քաղաքական գործընթացում:

Այսպիսով, թեմայի ընտրությունը պայմանավորված է՝ ուսումնասիրության առարկա հարցերի տեսական ու գործնական կարևորությամբ, դրանք հնարավորինս խորը և բազմակողմանի վերլուծության ենթարկելու և զուգահեռներ անցկացնելու միտումով:

Հետազոտական աշխատանքի նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է՝ բազմակողմանի ուսումնասիրել քաղաքական վարչակարգերը, անցումը ավտորիտարիզմից դեպի ժողովրդավարության գործընթացը, դրսևորումները ՀՀ-ում, ինչպես նաև՝ առաջարկել նոր լուծումներ,թե ինչպես հաստատել ժողովրդավարական քաղա-

քական վարչակարգ՝ այն երկրներում, որտեղ հաստատված է ավտորիտար վարչակարգ։

Նշված նպատակներին հասնելու համար առաջադրվել է հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել քաղաքական վարչակարգերի էությունը, տալ քաղաքական վարչակարգի բնութագիրը,
- Սահմանել ավտորիտար և ժողովրդավարական վարչակարգերը, առանձնացնել դրանց տեսակները, բնորոշ գծերը, դրսևորումները, նշել ժողովրդավարության կարևոր հատկանիշները, իրականացման ձևերը, առանձնահատկությունները,
- Քննարկել և առանձնացնել ավտորիտար և ժողովրդավարական վարչակարգերի հիմնական գծերը, բնութագրական հատկանիշները, ընդգծել ավտորիտար վարչակարգի և ժողովրդավարական վարչակարգի տարբերությունները,
- Իրականացնել բազմակողմանի վերլուծություն՝ անցումային հասարակությունների միջև՝ օգտագործելով անցումներն ուսումնասիրող տեսաբանների հայեցակարգերը,
- Թվարկե՛լ անցումային հասարակության խնդիրները, հետազոտել այն գործոնները, որոնք ազդում են ժողովրդավարացման վրա,
- Արձանագրել 2018թ. Թավշյա Հեղափոխությունից հետո առաջընթացը՝ քաղաքական վարչակարգում, գործելակերպում,
- Նկարագրել ՀՀ-ում ավտորիտարիզմից անցումը դեպի ժողովրդավարություն:

Հետազոտության մեթոդները: Թեմայի առանձնահատկություններով և դրանում վերլուծված հարցերի շրջանակով պայմանավորված՝ հետազոտության ընթացքում օգտագործվել է ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ մեթոդները: Առավելապես մեծ նշանակություն է տրվել՝ համակարգային, համեմատական,վերլուծական, պատմական, տրամաբանական վերլուծության համադրման և այլ մեթոդներին՝ աղբյուրների և նյութերի հետազոտման, դասակարգման և ստացված արդյունքների ընդհանրացման առումով:

Հետազոտական աշխատանքի ծավալն ու կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է՝ ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, որը բաղկացած է 15 անուն գրականությունից:

ԳԼՈՒԽ Ի.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

Առաջիններից մեկը, ով գիտական շրջանառության մեջ է դրել քաղաքական վարչակարգի հասկացությունը, ֆրանսիացի քաղաքագետ Մորիս Դյուվերժեն է: Նա սահմանում է քաղաքական վարչակարգը՝ որպես պետական կառավարման բարձրագույն մարմինների ձևավորման գործընթաց, որին մասնակցում են քաղաքական կուսակցությունները և ճնշման խմբերը: Հետագայում այս հասկացությունը բազմիցս փոփոխվել և ճշգրտվել է, սակայն այն դեռ շարունակում է մնալ քաղաքագետների միջև երկարատև քննարկումների և բանավեճերի առարկա:

Մասնագիտական գրականության մեջ տարբերում են քաղաքական վարչակարգի սահմանման մի քանի մոտեցումներ՝

- քաղաքական վարչակարգը նույնացվում է քաղաքական համակարգի հետ,
- քաղաքական վարչակարգն ընկալվում է որպես հասարակության կառավարման համակարգ (ձև),
- քաղաքական վարչակարգը սահմանվում է որպես գաղափարախոսական, ինստիտուցիոնալ և սոցիոլոգիական տարրերի ամբողջություն, որոնք նպաստում են երկրի քաղաքական իշխանության ձևավորմանը որոշակի ժամկետով,
- քաղաքական վարչակարգը սահմանվում է որպես քաղաքական համակարգի գործառութային բաղադրիչ. այս մոտեցման դեպքում քաղաքական վարչակարգը ներառում է քաղաքական հարաբերությունների զարգացման մեթոդները, միջոցները և մեխանիզմները,
- քաղաքական վարչակարգը սահմանվում է որպես հասարակության քաղաքական համակարգի գործառնության և դրա հիմնական տարրերի փոխկապակցվածության ձև,
- քաղաքական վարչակարգը հասկացվում է որպես տվյալ հասարակության պետական իշխանության կառուցվածքի, դրա մեթոդների և միջոցների համակարգ, որը պայմանավորված է տվյալ հասարակության զարգացվածության աստիճանով,

- քաղաքական վարչակարգը սահմանվում է որպես հանրային իշխանության ինստիտուտների և քաղաքացիական հասարակության միջև փոխհարաբերությունների ձև[1]:

Քաղաքական վարչակարգը քաղաքական կառավարման մեթոդների, եղանակների ու նպատակների ամբողջությունն է[2]: Քաղաքական վարչակարգը ստեղծվում է հասարակական-քաղաքական համակարգի սահմաններում՝ մի շարք գործոնների ազդեցությամբ: Այդ գործոններն են. կառավարող քաղաքական վերնախավի կողմից առաջադրված խնդիրները, նպատակները ու դրանց լուծման եղանակները, հասարակական-քաղաքական ուժերի հարաբերակցության վիճակը, տվյալ երկրի ազգային-պետական ավանդույթները, ժողովրդավարության և քաղաքական մշակույթի մակարդակը և այլն: Քաղաքագետների մեծամասնության կարծիքով՝ քաղաքական վարչակարգը բնութագրվում է մի շարք չափանիշներով, որոնք արտացոլում են հասարակության քաղաքական կյանքի, ժողովրդավարության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների վիճակը: Հատկապես կարևոր նշանակություն ունեն պետության առաջին դեմքերի դերը և գործառույթները քաղաքական կառավարման համակարգում, ներկայացուցչական հաստատությունների գործունեության կազմակերպման ուղիները և եղանակները, քաղաքական կուսակցությունների և զանազան հասարակական կազմակերպությունների դիրքը, քաղաքացիների իրավական կարգավիճակը, լրատվության օբյեկտիվ աղբյուրների գոյությունը և այլն: Քաղաքական վարչակարգի կառուցվածքում էական դեր են խաղում՝ սահմանադրական կարգը, իրավական նորմերի համակարգը և դրանց կոնկրետ իրականացումը գործնական կյանքում: Միաժամանակ, քաղաքական վարչակարգը որոշում է ինչպես պետական մարմինների, այնպես էլ հասարակական, քաղաքական կազմակերպությունների գործունեության պայմանները, ապահովում է քաղաքական համակարգի բոլոր տարրերի նորմալ կենսագործունեությունը[3]:

Քաղաքական վարչակարգի բնույթը, նրա մի ձևից մյուսին անցման գործընթացը ճիշտ հասկանալու համար պետք է կարողանալ ճիշտ զուգակցել սահմանադրական, իրավական մեխանիզմները և քաղաքական իրականությունը[4]:Միանման համակար-

---

[1] **Օրդուխանյան Է.,**Սուքիասյան Հ., Քաղաքագիտություն (ուսումնամեթոդականձեռնարկ), Եր., 2016, էջ 68-69:
[2] **Ղահրամանյան Կ.,** Քաղաքագիտություն, բուհական դասագիրք , Եր.2005, էջ 49:
[3] Քաղաքագիտություն, ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Եր. 2006, էջ 367:
[4] Նույն տեղում, էջ 369:

գեր ունենալով, տարբեր երկրներ կարող են ունենալ միանգամայն տարբեր քաղաքական վարչակարգեր և ընդհակառակը՝ կարող են համակարգերը տարբեր լինել, վարչակարգերը՝ միանման: Օրինակ՝ եվրոպական շատ երկրներ քաղաքական համակարգի ձևով սահմանադրական միապետություններ են՝ Շվեդիան, Բելգիան, Նորվեգիան, Մեծ Բրիտանիան և այլն, սակայն պետական մարմինների ձևավորման եղանակով, կառավարման ժողովրդավարական մեթոդներով՝ համապատասխանում են հանրապետական համակարգին: Եվ, ընդհակառակը, հատկապես արևելյան երկրներում հաստատված է ձևական հանրապետական կարգ, որոնք վարչակարգով ըստ էության միապետական են: Օրինակ՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքական կառուցվածքը ժողովրդավարական է, իսկ վարչակարգը՝ ավտորիտար[5]:

Հաճախ ենթադրվում է, որ հանրապետական կառավարման ձևը պետք է լինի ավելի ժողովրդավարական, քան միապետականը: Օրինակ՝ Ճապոնիան սահմանադրական միապետություն է, իսկ Իրաքը հանրապետություն: Սակայն ժողովրդավարության մակարդակը Ճապոնիայում մի քանի անգամ ավելի բարձր է, քան հանրապետական կառավարման ձև ունեցող Իրաքում: Այս հանգամանքը ևս պայմանավորված է այդ երկրների քաղաքական վարչակարգերի միջև գոյություն ունեցող արմատական տարբերություններով[6]:

Ունենալով հանրապետական կառուցվածք, կառավարման իրական մեթոդներով ու նպատակներով ըստ էության միապետություններ են (այն էլ՝ բացարձակ) Թուրքմենստանը, Ղազախստանը, Ուզբեկստանը և այլն: Թուրքմենստանի նախագահն, օրինակ, ցմահ է: Ադրբեջանում, Սիրիայում այդ պաշտոնը հորից որդուն անցավ ժառանգաբար: Իսկ Ուզբեկստանում, օրինակ, 2002թ. հանրաքվե անցկացվեց, որով գործող նախագահը համարվեց ևս 7 տարով ընտրված: Բայց իրականում ինչ տեղի ունեցավ. քվեաթերթիկում նշված էր՝ համաձայն եմ, որ գործող նախագահը մնա ևս 7 տարի: Ով համաձայն չէր, պետք է մտներ ընտրական խցիկը և ջնջեր: Այսինքն՝ կարծես քաղաքացուն տրված է իր կամքն արտահայտելու ազատություն, բայց գործնականում հազիվ թե որևէ մեկը կարողանա օգտվել դրանից (հենց խցիկ մտնելը կդիտվի որպես թշնամություն գործող վարչակարգի նկատմամբ)[7]:

---

[5] **Ղահրամանյան Կ.,** Նշ. աշխ., էջ 49-50:
[6] **Օրդուխանյան Է.,**Նշ. աշխ., էջ 68:
[7] **Ղահրամանյան Կ.,** Նշ.աշխ., էջ 50:

Շատ պետություններում, ժողովրդավարությունն ամրագրվել է միայն ֆորմալ ընթացակարգերում:

Այսպիսով՝ քաղաքական վարչակարգը թույլ է տալիս վեր հանել քաղաքական իշխանության իրական պատկերը, բնութագրել հասարակության քաղաքական կյանքը և դրա պայմանները, քաղաքական համակարգի զարգացվածության աստիճանը: Քաղաքական վարչակարգի բնութագիրը ներառում է հետևյալ տարրերը:

- տվյալ քաղաքական վարչակարգի առաջացման պայմանները (քաղաքական իշխանության առաջացման ձևը),
- պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների բնույթը,
- օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման աստիճանը,
- պետական իշխանության իրականացման բնույթն ու չափը,
- քաղաքական վարչակարգի լեգիտիմությունը,
- քաղաքական կյանքում բանակի, ոստիկանության, հատուկ ծառայությունների տեղն ու դերը,
- իշխանական մարմինների աշխատանքի հրապարակայնության, թափանցիկության աստիճանը և հասարակության կողմից դրանց վերահսկողության չափը,
- տեղական ինքնակառավարման մարմինների դերը քաղաքական գործընթացում,
- քաղաքական կուսակցությունների առկայությունը, դրանց ներքին կառուցվածքը և կուսակցական համակարգի մոդելը,
- գաղափարախոսության դերը հասարակության մեջ,
- քաղաքական առաջնորդության բնույթը,
- քաղաքականության և հասարակական գործընթացների կառավարման գործում քաղաքացիների ներգրավվածության աստիճանը և բնույթը (քաղաքացիների քաղաքական վարքագծի ձևը),
- հասարակության մեջ անձի կարգավիճակը, նրա իրավունքները և ազատությունները,
- քաղաքական որոշումների ընդունման կարգը,

- ընդդիմության հետ հարաբերությունների բնույթը, կոնֆլիկտային իրավիճակների կարգավորման մեթոդները[8]:

Քաղաքական վարչակարգի կարևոր բնորոշ գծերն են՝ իշխանության մարմինների ձևավորման սկզբունքները՝ քաղաքական նպատակները և դրանց հասնելու եղանակներն ու մեթոդները: Քաղաքական վարչակարգերի տեսակներն անսահման շատ են: Ըստ էության յուրաքանչյուր երկրի, նույնիսկ զարգացման յուրաքանչյուր էտապ մյուսից զանազանվում է իր վարչակարգով, որովհետև դրանում կարևոր դեր են կատարում պետության առաջին դեմքերը, նրանց անմիջականորեն շրջապատող մարդիկ: Եվ քանի որ դրանք անկրկնելի են, փաստորեն չեն կարող լինել լրիվ միանման վարչակարգեր: Սակայն առավել ընդհանուր գծերով կարելի է առանձնացնել վարչակարգի 3 տեսակ՝ ամբողջատիրական, ավտորիտար և ժողովրդավարական[9]:

Այսպիսով՝ քաղաքական վարչակարգերը, իրենց կարևորագույն դերակատարությունն ունեն քաղաքական գործընթացում: Քաղաքական իշխանության որդեգրած սկզբունքները, գործելակերպը, սահմանափակումները, ազատությունները և այլն, ամփոփվում են քաղաքական վարչակարգի մեջ: Համեմատելով՝ արևելյան և եվրոպական մի շարք երկրների քաղաքական վարչակարգերը, դրսևորումները, հստակ պատկերացում ենք կազմում տվյալ պետության՝ քաղաքական կյանքի, որոշումների ընդունման կարգի, հասարակության մասնակցության աստիճանով՝ քաղաքական գործընթացներին:

1.1.ԱՎՏՈՐԻՏԱՐԻԶՄ

Ավտորիտար բառը ծագում է լատիներեն իշխանություն, ազդեցություն, նաև՝ նախաձեռնող, հիմնադիր, հեղինակ բառերից: Այլ կերպ ասած՝ ավտորիտար բառը, նշանակում է հեղինակության իշխանություն: Ավտորիտար վարչակարգը բնութագրվում է նրանով, որ ամբողջ իշխանությունը գտնվում է մեկ հոգու (միապետի, դիկտատորի) կամ կառավարող խմբի ձեռքում: Ավտորիտար վարչակարգ սահմանված երկրներում, Սահմանադրությունը՝ դեկլարատիվ բնույթ ունի (այսինքն՝ կա, բայց իրականում չի գործում):

Ավտորիտարիզմը միջանկյալ դիրք է գրավում ամբողջատիրության ու ժողովրդավարության միջև, ամենատարածված վարչակարգերից է: Այն մի տեսակ անցու-

[8] **Օրդուխանյան Է., Սուքիասյան Հ.,** Նշ. աշխ., էջ 69-70:
[9] **Ղահրամանյան Կ.,** Նշ. աշխ., էջ 51:

մային էտապ կարող է լինել ինչպես ամբողջատիրությունից ժողովրդավարության, այնպես էլ հակառակ գործընթացի համար։ Ավտորիտար վարչակարգերը շատ բազմազան են լինում, կարող են իրենց էությամբ լինել ռեակցիոն, պահպանողական կամ առաջադիմական։ Օրինակ՝ Չիլիում, Բրազիլիայում, Հարավային Կորեայում ավտորիտարիզմի ճանապարհով հաստատվել է ժողովրդավարական ռեժիմ[10]։

Տարբերում են ավտորիտարիզմի հետևյալ տեսակները՝ քաղաքացիական բռնապետություն, ռազմական բռնապետություն, աստվածապետական վարչակարգ, ռասիստական վարչակարգ։ Քաղաքացիական բռնապետությունը բնութագրվում է քաղաքացիական անձի միանձնյա իշխանությամբ (օրինակ՝ Արաբական Արևելքի վարչակարգերը)։ Ռազմական բռնապետությունն առաջանում է ռազմական հեղաշրջման արդյունքում (օրինակ՝ Պինոչետի բռնապետությունը Չիլիում)։ Ռազմական բռնապետություններն առավել տարածված են Աֆրիկայում, Ասիայում և Լատինական Ամերիկայում։ Դրանք առանձնանում են իշխանության ծայրահեղ անկայունությամբ։ Երբեմն իշխանության համար պայքարը վերածվում է քաղաքացիական պատերազմի։ Սակայն կան դեպքեր, երբ հեղաշրջումն իրականացվում է մեկ զորամիավորման կողմից, ինչպես աֆրիկյան մի շարք երկրներում։ Լատինական Ամերիկային հատուկ են սեփական զինված ուժերի միջոցով իշխանության եկած փոքր խմբերը՝ ռազմական խունտան (իսպանական «junta» բառից, որը նշանակում է «ժողով»,«միություն»), երբ ժամանակավոր կառավարությունը ձևավորվում է զորահրամանատարների կողմից, ովքեր հենվում են կառավարման ճնշիչ մեթոդների և զանգվածային քաղաքական ահաբեկչության վրա։

Ավտորիտար քաղաքական վարչակարգի բնորոշ գծերն են.

- Արտաքին և ներքին քաղաքականության վրա պետության ղեկավարի և նրա շրջապատի մենաշնորհի հաստատում, գործադիր իշխանության իրավասությունները վեր են կանգնած օրենսդիր իշխանությունից։
- Իշխանությունները չեն հսկվում ժողովրդի կողմից։ Քաղաքացիները կամ օտարված են իշխանությունից, կամ անտարբեր են նրա նկատմամբ։

[10] **Դահրամանյան Կ.,** Նշ. աշխ., էջ 53-54։

- Քաղաքացիների քաղաքական իրավունքներն ու ազատությունները նշանակալիորեն սահմանափակվում են: Օրենքը պաշտպանում են միայն պետության կամ նրա անունից հանդես եկող քաղաքական ուժի (անհատ,խումբ) շահերը:
- Պետությունը արգելում կամ դժվար է հանդուրժում քաղաքական ընդդիմությանը՝ սահմանափակելով նրա գործունեությունը, երբեմն էլ դարձնելով անհնարին:
- Զանգվածային լրատվության բոլոր միջոցների վրա, որոնք որևէ կերպ կփորձեն քննադատել իշխողների վարած քաղաքականությունը, տարածվում է գրաքննություն: Ազատ է միայն այն մամուլը, որը գովերգում է իշխանությանը:
- Սովորաբար ծաղկում է ապրում կոռուպցիան, հովանավորչությունը, նամանավանդ պաշտոնների բաժանման ժամանակ: Բարոյական նորմերը սովորաբար կրում են պահպանողական բնույթ:
- Բնակչության քաղաքական ակտիվության աստիճանը ցածր է, չնչին մասն է մասնակցում քաղաքական գործընթացներին, եթե դրանք դեպքից դեպք տեղի են ունենում: Այս քաղաքական վարչակարգի լոզունգն է՝ «այն ամենը, ինչը չի թույլատրվում՝ արգելված է»[11]:

Այսպիսով, ավտորիտարիզմն՝ լինելով կոշտ քաղաքական կառավարման վարչակարգ, անընդհատ օգտագործում է հարկադրանքի, և ուժային մեթոդներ ՝ հիմնականում սոցիալական գործընթացները կարգավորելու համար: Դրա պատճառով հասարակության ամենակարևոր քաղաքական ինստիտուտները պետության կարգապահական կառույցներն են՝ նրա իրավապահ մարմինները (բանակ, ոստիկանություն, հատուկ ծառայություններ), ինչպես նաև քաղաքական կայունության ապահովման նրանց միջոցները (բանտեր, համակենտրոնացման ճամբարներ, կանխարգելիչ կալանավորումներ, խմբակային և զանգվածային ճնշումներ, խստացված կառավարման մեխանիզմներ) քաղաքացիների պահվածքի համար):

Այսպիսով, ավտորիտար վարչակարգը՝ հեղինակության իշխանություն է, որին բնորոշ է իշխանության կենտրոնացումը մեկ մարդու կամ իշխանության որևէ մարմնի ձեռքում: Ավտորիտար վարչակարգով կառավարող քաղաքական իշխանությունը, կարծես թե իր կամքն է թելադրում հասարակությանը, այն էլ բռնի կերպով:

1.2.ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

[11] **Պետրոսյան Ռ.,** Քաղաքագիտություն, Եր. 2004, էջ 103-104:

Դեմոկրատիա բառը ծագել է հունարեն demos-ժողովուրդ + kratos – իշխանություն բառերից՝ ժողովրդաիշխանություն։ Այս գաղափարն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել Հերոդոտը (մ.թ.ա.5-րդ դար), ըստ որի այն հավասարության վրա հիմնված պետություն է, որտեղ պաշտոնները զբաղեցնում են վիճակահանության կարգով։ Անտիկ շրջանի դեմոկրատիայի գաղափարը ձևակերպել է Արիստոտելը, ըստ որի, քաղաքացիներն ազատ են ու հավասար և մասնակցում են պետական կառավարման գործերին, մեծամասնության կարծիքը վճռական նշանակություն ունի[12]։

Քանի որ ժողովրդավարություն հասկացությունը նշանակում է և՛ ժողովրդաիշխանություն, և՛ ժողովրդավարություն, ուստի ժողովրդավարական կարող են համարվել այն երկրները, որոնցում ժողովուրդն է իշխանության աղբյուրը, իսկ կառավարությունը ժողովրդավարության որակի, արդյունավետության և շարունակականության իրականացնողը։ Ժողովրդավարությունը ոչ միայն պետական կառավարման եղանակ է, այլև «իրավունքների համակարգ, որովհետև իրավունքները ժողովրդավարական քաղաքական ինստիտուտների բաղկացուցիչ տարրերն են»։

Ժողովրդավարական կառավարման ձև ունեցող բոլոր պետությունները՝ հարգելով քաղաքացիավարական մեծամասնության կամքը, պաշտպանում են քաղաքացիավարական փոքրամասնության կամքը։

Ժողովրդավարությունը ներառում է մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ներպետական և վերազգային ընթացակարգերը՝ երաշխավորելով ազատության և իրավունքի ինստիտուցիոնալացումը[13]։

Ժողովրդավարությունն իրականացվում է երեք ձևով՝

1) ուղղակի. սա ժողովրդավարության ամենավաղ տեսակն է, երբ ձայնի իրավունք ունեցողն անմիջականորեն մասնակցում է որոշման ընդունմանը և հետևում է նրա կատարմանը։

Ժողովրդավարությունը ենթադրում է ժողովրդի ինչ-որ կերպ մասնակցելը քաղաքական գործընթացին. դա կարող է լինել քվեարկության միջոցով, որևէ հարցի շուրջ հրապարակայնորեն խոսելը և /կամ կապ հաստատելը պետական պաշտոնիայի հետ։ Ժողովրդավարությունները, ըստ էության, պատվիրակված են, այլ ոչ թե

[12] Քաղաքագիտություն, ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Եր. 2006, էջ 374։
[13] **Ալեքսանյան Ա.,** Արևմտյան ժողովրդավարությունների քաղաքական համակարգեր, տեսություն և արդիականություն, Երևան 2009, էջ 7-10։

ուղղակի, չնայած քաղաքական վերլուծաբանները, ինչպիսիք է՝ Ռ. Դահլը պնդում է, որ դրանք պետք է ուղղակի լինեն, որպեսզի իսկապես ժողովրդավարական լինեն[14]:

2) Հանրաքվե. դա այն է, երբ ժողովուրդը միայն առանձին դեպքերում ընդունում է որոշում:
3) Ներկայացուցչական ժողովրդավարություն. ժողովուրդն ընտրում է ներկայացուցիչներ, որոնք կառավարում են նրա անունից: Դա առավել տարածված ու արդյունավետ ձևն է, բայց մի լուրջ թերություն ունի՝ ժողովրդի ընտրյալները իշխանության լիազորություններ ստանալուց հետո ոչ միշտ են կատարում ընտրողների կամքը:

Ժողովրդավարության կարևոր հատկանիշներն են՝

- ժողովրդի գերագույն իշխանության իրավաբանական ճանաչում,
- իշխանության հիմնական մարմինների պարբերական ընտրովիություն,
- համընդհանուր ընտրական իրավունք, որը յուրաքանչյուր քաղաքացուն երաշխավորում է ակտիվ մասնակցություն իշխանության հիմնական մարմինների ձևավորմանը,
- յուրաքանչյուր քաղաքացու իրավունք ոչ միայն ընտրելու, այլև ընտրվելու ցանկացած ընտրովի պաշտոնի,
- որոշումների ընդունում ձայների մեծամասնությամբ և փոքրամասնության ենթարկում մեծամասնությանը,
- ներկայացուցչական մարմինների կողմից վերահսկողություն իշխանության գործադիր մարմինների նկատմամբ,
- ընտրովի մարմինների հաշվետվություն ընտրողներին[15]:
- Ժողովրդավարության հատկանիշներից մեկն էլ այն է, որ և՛ անձը, և՛ հասարակությունը գտնվում են ներդաշնակության (հարմոնիա) մեջ:

Արդի աշխարհում քաղաքական զարգացումները ընթանում են դեպի ժողովրդավարության սկզբունքների հաստատում: Այդ ուղին են բռնել աշխարհի երկրների մեծամասնությունը:

Ժողովրդավարության բնորոշ գծերն են.

[14] Comparing Political Regimes: A Thematic Introduction to Comparative Politics, Alan Siaroff, University of Toronto Press, 2009, p. 62.
[15] **Ղահրամանյան Կ.,** Նշ. աշխ., էջ 54-55:

- Իշխանությունները բաժանված են անկախ թևերի՝ օրենսդրական, գործադիր և դատական։ Հստակեցված են նրանց ֆունկցիաները։
- Քաղաքացիներն օժտված են մեծ իրավունքներով և ազատություններով։ Գլխավոր սկզբունքն է՝ «ինչը արգելված չէ օրենքով՝ թույլատրելի է»։
- Զանգվածային լրատվամիջոցները ազատ են գրաքննությունից, իրավունք ունեն քննադատելու իշխանություններին, երբ նրանք խախտում են ժողովրդավարական սկզբունքները, կամ վատ են կատարում իրենց սոցիալական պարտականությունները։
- Քաղաքացիները բաց ու ազատ կարող են արտահայտել իրենց կարծիքները, մտքերը և դիրքորոշումները իշխանության մարմինների գործունեության նկատմամբ։
- Ժողովրդավարական հասարակության մեջ կարող են տեղի ունենալ շատ բացասական երևույթներ, սակայն դրանց կարգավորումը իրականացվում է միշտ օրենքի պահանջներից ելնելով և անհատի իրավունքների պաշտպանության սկզբունքների կիրառմամբ ժողովրդավարության պայմաններում չեն բացառվում հանցագործությունների աճ։
- Ազգային փոքրամասնությունների իրավունքները պաշտպանված են։

Նշված սկզբունքները, բնորոշ գծերն ու առանձնահատկությունները կարող են մասամբ խախտվել, խեղաթյուրվել, չիրականանալ, ինչը պայմանավորված է տվյալ հասարակության մեջ ժողովրդավարական սկզբունքների հաստատման աստիճանով։ Այդ իսկ պատճառով պետք է հաշվի առնել, որ ժողովրդավարությունը, կախված տվյալ հասարակության զարգացման աստիճանից, ազգային առանձնահատկություններից, ավանդույթներից, մշակութային արժեքներից և այլն, իր դրսևորման և զարգացման տարբեր մակարդակներն ունի[16]։

Այսպիսով՝ ժողովրդավարությունը այնպիսի քաղաքական վարչակարգ է, որտեղ ժողովուրդն է սուվերեն իշխանությունը։ Ժողովրդավարությունը՝ այնպիսի քաղաքական վարչակարգ է, որտեղ ժողովրդի ձայնը լսելի է և ընդունելի։

[16]**Պետրոսյան Ռ.**,Նշ. աշխ., էջ 106-107։

ԳԼՈՒԱՎՏՈՐԻՏԱՐԻԶՄԻՑ ԴԵՊԻ ԺՈՂՈՎ II.

ԱՆՑՈՒՄԸ ՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Անցումներն ուսումնասիրող տեսաբաններն անցումը ավտորիտարիզմից դեպի ժողովրդավարություն անվանում են ժողովրդավարական անցում (դեմոկրատական տրանզիտ), իսկ քաղաքագիտական համապատասխան ուղղությունը (անցումագիտություն)։ Որոշակի ժամանակաշրջանի անուն կամ պարզապես տերմին լինելուց զատ, այն առաջին հերթին մոդել է։ Ինչպես իրավացիորեն նկատում է հայտնի անցումագետ Ա. Պրզևորսկին, ժողովրդավարական անցման մոդելը միարժեք պատասխան չունի այն հարցին, թե «անցումը կավարտվի ժողովրդավարությա՞մբ, թե դիկտատուրայով, նո՞ր, թե՞ հին»։ Այսինքն, թեպետ մոդելի անվան համաձայն անցմանը տրվում է ժողովրդավարության տեսք, սակայն դա դեռևս չի ենթադրում ժողովրդավարության (ինչպես ընդունված է անվանել՝ կոնսոլիդացված ժողովրդավարության) կայացումը իբրև մոդելի բաղձալի ելք։ Սա ինքնին վկայում է, որ անցման մոդելի հիմնական առանձնահատկությունը նրա բացությունն է իբրև գործարկվող համակարգ (մասնավորապես՝ նրա ապագայի բացությունը, որտեղ ամենատարբեր արդյունքներն ակնկալելի են) ու դրա արդյունք բազմալուծումայնությունը[17]։

Անցումային գործընթացների հետազոտման սկիզբը ժամանակակից քաղաքագիտության մեջ դրել է Դ. Ռաստոուն։ 1970թ. «Comparative Politics» ամսագրում լույս տեսած նրա հոդվածում կենտրոնական էր հետևյալ հիմնահարցը. «Ինչպես են երկրները մի հասարակարգից անցնում այլ հասարակարգի, և ինչու որոշ լիբերալ դեմոկրատներ տարանջատվում են, իսկ մյուսները շարունակում են իրենց կայուն գոյությունը»։ Ռաստոուն մերժեց այդ ժամանակ գոյություն ունեցող և իշխող մոտեցումները, որոնք բացատրում էին անցումները սոցիալ-տնտեսական զարգացման հետևանքներով, քաղաքական կուլտուրայի առանձնահատկություններով կամ հասարակության սոցիալական և քաղաքական կառուցվածքի միջոցով։ Ըստ Ռաստոուի այդ տեսությունները պատասխանում են այն հարցին, թե ինչու որոշ երկրներ հանդիսանում են լիբերալ դեմոկրատական, իսկ մյուսները՝ ոչ, բայց չեն պատասխանում այն հարցին, թե ինչու երկրները դառնում են կամ չեն դառնում լիբերալ դեմոկրատա-

[17] **Հարությունյան Մ.,** Ավտորիտարիզմից ժողովրդավարությանն անցման շրջանի օրինաչափությունները (Հայաստանի օրինակով), Եր. 2003, էջ 16-17։

կան։ Ռաստոուն ժխտում է, այսպես կոչված, ֆունկցիոնալ մոտեցումը, որը ենթադրում է քաղաքական համակարգերի գործունեության մեխանիզմի ընդօրինակում՝ առաջարկելով մի մոտեցում, որն անվանվել է «գենետիկ»։ Այդ մոտեցումը բացահայտում է այն գործոնները, որոնք ազդում են ժողովրդավարության անցման վրա։ Որպես անհրաժեշտ նախնական պայմաններ, նա առանձնացրեց ազգային միասնությունը, ազգային նույնականությունը։

Ժողովրդավարության անցումը ըստ Ռաստոուի ներառում է 3 փուլ.

- «Նախապատրաստական փուլ», որի տարբերող գիծը հանդիսանում է պլյուրալիզմը, այլ քաղաքական շահերի բևեռացումը,
- «Որոշումների ընդունման փուլ», որի ժամանակ կնքվում են պայմանագիր կամ պայմանագրեր, և մշակվում ու գիտակցաբար ընդունվում են ժողովրդավարական կանոններ,
- «Հարմարվելու փուլ», երբ տեղի է ունենում ժողովրդավարական արժեքների, ինչպես նաև քաղաքական ընթացակարգերի և ինստիտուտների ամրապնդում։

Դ. Ռաստոուն փաստորեն հիմնադիրն է քաղաքական հետազոտությունների նոր ուղղության՝ տրանզիտոլոգիայի (անցումնաբանություն)։ Տրանզիտոլոգիան ուսումնասիրում է ժողովրդավարությանն անցնելու գործընթացը՝ թեկուզև տարբեր իդեալիստական սխեմաների միջոցով։ Միևնույն ժամանակ նշում է, որ ձևափոխման ձևը և բնույթը կարող են նշանակալիորեն տարբերվել տարբեր պատմական ժամանակաշրջաններում[18]։

Ս. Հանթինգտոնը բերում է արդի ժողովրդավարացման 5 մոդել՝ իրենց պատմական համատեքստում.

- Ցիկլիկ մոդել-ավտորիտար և ժողովրդավարական վարչակարգերի պարբերական փոփոխություն։
- «Երկրորդ փորձ», այսինքն՝ երկրորդային ժողովրդավարացում. նրանից հետո, երբ առաջինը ընդհատվել էր ավտորիտար վարչակարգով։
- Ընդհատված ժողովրդավարության մոդել, ժողովրդավարության վերականգնում, որի նախկին կայուն գոյությունը ընդհատվել էր ոչ ժողովրդավարական վարչակարգի հաստատումով։

[18] Քաղաքագիտություն, ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, էջ 396-397։

- Անմիջական անցման մոդել այն երկրներում, որտեղ նախկինում չի եղել ժողովրդավարության փորձ:
- Ապագաղութականացման մոդել, այսինքն ժողովրդավարության հաստատում անկախություն ձեռք բերելուց հետո:

Սակայն վերոհիշյալ բոլոր մոդելները, ունենալով մի շարք արժանիքներ, այնուամենայնիվ հիմնված են անցման կոնկրետ երկրների օրինակների վրա և չունեն համընդգրկուն բովանդակություն:

Անցումային մոդելներից շատերն ունեն ընտրախավային բնույթ, և դրանց հեղինակները ելնում են նրանից, որ ժողովրդավարացման հիմնական դերակատարները հանդիսանում են ամենից առաջ ընտրախավերը, և անցման հաջողությունը կամ անհաջողությունը կախված է առաջնորդության բնույթից, ուժերի դասավորությունից և ընտրախավի քայլերից: Միևնույն ժամանակ գոյություն ունի անցման ուսումնասիրության մեկ այլ մոտեցում, այսպես կոչված՝ կառուցվածքային մոտեցում, որը պայմանավորում է ժողովրդավարացման գործընթացը որոշակի սոցիալական, տնտեսական, մշակութային գործոնների առկայությամբ, որոնք դրական կամ բացասական ազդեցություն են ունենում անցման արդյունքի վրա: Կարելի է նշել կառուցվածքային նախապայմանների 3 հիմնական տիպ. ազգային միասնության և ինքնագիտակցության առկայություն, տնտեսական զարգացման բավական բարձր ցուցանիշներ, ժողովրդավարական նորմերի և սկզբունքների տարածվածություն[19]:

Ժողովրդավարության անցման գործընթացում կամ անցում կատարելու գործընթացում սովորաբար առանձնանում են երեք փուլ՝ազատականացում, ժողովրդավարացում և համախմբում: Ազատականացումը որոշակի քաղաքացիական ազատությունների համախմբման գործընթաց է՝ առանց ուժի ապարատը փոխակերպելու[20]: Ժողովրդավարացումը ներառում է ազատականացման տարրեր, սակայն պահանջում է բաց պայքար, մրցակցություն՝ ընտրություններում հաղթելու համար, և ազատ մրցակցային ընտրություններ՝ կառավարության նկատմամբ վերահսկողություն ստանալու համար, որոնց արդյունքներով ձևավորվում է իշխող ընտրախավը[21]:

---

[19] Քաղաքագիտություն, ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Եր. 2006, էջ 397:

[20] **Мельвиль А. Ю.,** [и др.]./Политология: учеб/: Московский государственный институт международных отношений (Университет) МИД России, ТК Велби, Изд-во Проспект, М., 2008, стр. 225-226.

[21] Քաղաքագիտություն, ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Եր. 2006, 398:

Անցման վերջին փուլը համարվում է «համախմբված ժողովրդավարություն»: Ժողովրդավարության համախմբումը կառավարման մենիշխանական ձևից ժողովրդավարականին անցնելու վճռորոշ փուլն է: Այն սկսվում է նախորդ վարչակարգի հետ ունեցած կապերի վճռական խզումից հետո, ինչը թույլ է տալիս տնտեսական, սոցիալական և մշակութագաղափարախոսական հակասությունների և ճգնաժամերի դեպքում պահպանել հնարավորինս կայուն զարգացում:

Ժողովրդավարական համախմբումը ժամանակակից հասարակարգի զարգացման նախապայմանն է, որի միջոցով հասարակարգը վարչահրամայական կարգից անցում է կատարում ժողովրդավարականին[22]:

Անցումը (տրանզիտ) յուրահատուկ ընթացք և ավարտ է ունենում տարբեր երկրներում: Ըստ Ա. Մելվելի՝ ժողովրդավարական անցումը, որպես քաղաքական զարգացման մոդել, ունի առանցքային երեք բաղկացուցիչներ՝ անցման նախադրյալները, ձևերը և հետագծերը: Գտնվելով որոշակի փոխկապակցվածության մեջ՝ այդուհանդերձ նրանցից յուրաքանչյուրին բնորոշ է հարաբերական անկախությունը: Այսպես, անցումը ենթադրում է որոշակի նախադրյալների առկայություն, անցման ձևերը ուղեկցում են ժողովրդավարացման ողջ գործընթացին, իսկ հետագիծն ընդհանրապես առաջինի և երկրորդի հանրագումարն է[23]:

Ժողովրդավարության զարգացման խնդիրը արդիական է հատկապես ավտորիտար համակարգերի դեպքում: Քաղաքացիների մասնակցությունն ընդլայնող միջոցառումները կարող են նպաստել համաձայնողական համակարգին անցնելուն: Ամեն դեպքում, դրանք հնարավոր են քաղաքական էլիտայի, մասնավորապես դրա կառավարող հատվածի, ծրագրային գործողությունների արդյունքում: Եթե ավտորիտար վարչակարգի վերնախավի մոտ բացակայում է ժողովրդավարության ընդլայնման կամքը, ապա ժողովրդի մասնակցությունը կմնա իր բնական չափաբաժնի սահմաններում, եթե իհարկե գործ չունենք համակարգի հեղափոխական վերակառուցման հետ:

---

[22] **Սարգսյան Ա.,** «Ժողովրդավարական համախմբում» հասկացության քաղաքագիտական մեկնաբանության շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2018 № 2 (26), էջ 55, 61:

[23] **Մանուկյան Ա.,** նշ. աշխ., էջ 93:

Ավտորիտար վարչակարգի տեսանկյունից ժողովրդավարության ընդլայնումը կամ սահմանափակումը նշանակում է վարչակարգի կողմից հասարակական կարծիքի հետ ավել կամ պակաս չափով հաշվի նստել[24]:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո եվրոպական բազմաթիվ երկրներում (Իսպանիա, Հունաստան) հաստատվեցին ժողովրդավարական վարչակարգեր, հաղթահարվեցին ավտորիտարիզմի ամենատարբեր ձևերը: Անկասկած, գոյություն չունի անցման շրջանի ինչ-որ համընդհանուր մոդել, որը կարելի է աշխարհի ցանկացած երկրում նույնությամբ կիրառել: Մշտապես հարկ է հաշվի առնել տվյալ երկրի բնակչության՝ հասարակությունը վերափոխելու ձգտումներն ու կամքը, նրա քաղաքացիական հասունության մակարդակը, ազգային համաձայնության հաստատման գործնական հնարավորությունները, քաղաքական կոնկրետ մշակույթի՝ ժողովրդավարության ուղիով ինքնազարգանալու ներուժը և ունակությունները:

Ամբողջատիրական վարչակարգերի քայքայման օրինակով հասկանալի է, որ բեկումնային, շրջադարձային անցումները մի հասարակարգից մյուսին՝ մշտապես ուղեկցվում են համակարգային ճգնաժամերով: Վերլուծաբանները խոսում են պետական ինստիտուտների, այսպես կոչված՝ ինստիտուցիոնալ և լեգիտիմության ճգնաժամերի մասին: Նկարագրում են, թե ինչպես է ձևավորվում սոցիալական բողոքի ալիքը, բախումները վերաճում քաղաքական ճգնաժամերի[25]:

Քաղաքական փակ համակարգից ժողովրդավարական բաց կարգերին անցման փուլի տևողությունը, բարդությունը և հաջողությունը պայմանավորված են մի շարք գործոններով: Այդ գործոնների մեջ էական դեր են խաղում տվյալ երկրի տնտեսական ու հոգևոր զարգացման մակարդակը, ազգային առանձնահատկությունները, քաղաքական, իրավական հաստատությունների առկայությունը, ներքին և արտաքին սոցիալ-քաղաքական պայմանները և այլն: Քաղաքական պրակտիկայում չի եղել մի դեպք, որ անցումը հասարակական մի համակարգից մյուսին իրականացվի առանց մեծ կամ փոքր ցնցումների: Այս տեսակետից հաջողություններ են ունեցել Մեծ Բրիտանիայի, Հոլանդիայի և Հյուսիսային Եվրոպայի երկրները՝ այն էլ բավականին երկար պատմական ժամանակաշրջանում: Ժողովրդավարական կարգերի ստեղծու-

---

[24] **Աղայան Ա.,** Հայաստանի քաղաքական համակարգի զարգացման հիմնախնդիրները, Եր. 2003, էջ 66-67:

[25] **Հարությունյան Մ.,** Ավտորիտարիզմից ժողովրդավարությանն անցման շրջանի օրինաչափությունները (Հայաստանի օրինակով), Եր. 2003, էջ 35:

մը հաջող է իրականացվում այն ժամանակ, երբ անցումը կատարվում է խաղաղ ճանապարհով: Ինչպես վկայում է պատմական փորձը, քաղաքական առումով՝ զինված հեղափոխությունները չեն հանգեցնում ժողովրդավարական կարգերի հաստատման:

Ավտորիտար վարչակարգերը ժողովրդավարականի վերածելու մյուս ուղին էլ այն է, որ ստեղծված քաղաքական, ռազմական սուր ճգնաժամի կամ անձնական այլ շարժառիթների պատճառով՝ իշխանությունները հրաժարական են տալիս, կապիտուլացվում են: Դա վերաբերում է հատկապես ռազմական վարչակարգերին: Վերջապես ամենակայուն ու հիմնարար ճանապարհը աստիճանական վերափոխումներն են, որոնց պետք է մասնակցեն հասարակության բոլոր առողջ ուժերը: Այստեղ գլխավորն այն է, որ իշխանության գլուխ կանգնած ավտորիտար ուժերը համաձայնեցված եղանակով աշխատեն ընդդիմության հետ, հնարավորություններ ստեղծեն կառուցողական ուժերի ակտիվացման համար: Այս տևական ժամանակաշրջանի ղեկավարման դժվարությունների մեծ մասը պայմանավորված է նախկին վարչակարգից ժառանգություն ստացած չլուծված խնդիրներով, որոնց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում ազգային հարցը: Եթե վերափոխումների ժամանակ քաղաքական գործիչներն առաջնորդվում են ազգային շահերի պաշտպանության մղումով, ապա նրանք պետք է պատրաստ լինեն փոխզիջումների, նրանց վարքագծի մեջ իշխողը պետք է լինի համագործակցության և կառուցողական սկզբունքը:

Ժողովրդավարական վերափոխումների գործընթացի հաջողությունը պայմանավորված է նաև տվյալ հասարակության քաղաքական մշակույթի, մարդկանց քաղաքական գիտակցության զարգացման աստիճանով:

Այսպիսով, անցման գործընթացը՝ ավտորիտարիզմից դեպի ժողովրդավարություն, բարդ, երկարատև և յուրահատուկ ընթացք է ունենում յուրաքանչյուր պետությունում: Ավտորիտար վարչակարգից անցումը ժողովրդավարություն՝ իրականացվում է փուլերով, և յուրաքանչյուր պետություն՝ տարբեր պատմական ժամանակաշրջանում, տարբեր ազգային առանձնահատկություններից ելնելով՝ նշանակալիորեն տարբերվում է:

ԳԼՈՒԽ III.
ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Անցումային բոլոր երկրներում, այդ թվում և Հայաստանում, ժողովրդավարական անցման ամենահիմնական առանձնահատկությունը «բարեփոխումեր վերևից» կամ «հեղափոխություն վերևից» սցենարի առկայությունն էր: Իսկ զարգացումներն ու անցման մնացած ձևերը ենթարկվեցին «պատճառականության ձագարի» մոդելի տրամաբանությանը, որը մշակել է Ա. Քեմպբելը: Այսինքն, սոցիալական-քաղաքական կյանքի բացառապես հիերարխիկ կազմակերպվածության պատճառով՝ ողջ անցումային գործընթացի համար ելակետ դարձան մոդելի ամենավերին հարթության գործոնները: Մշակված մոդելը համադրում է ընթացակարգային և կառուցվածքային մոտեցումները՝ դրանք բխեցնելով ու ամբողջացնելով կառուցվածքներից, և գործընթաց-ընթացակարգերից[26]:

Ժողովրդավարական այլ անցումների հետ Հայաստանի անցումային շրջանի մեկ այլ ընդհանրությունը անցման փուլայնությունն է: Մասնավորապես, հակաժողովրդավարական քաղաքական վարչակարգերից ժողովրդավարություն անցում կատարած երկրների փորձը ցույց է տալիս, որ ըստ իրականացվող բարեփոխումների հետապնդած նպատակի բնույթի՝ այդ անցումներն ընթանում են երկու խոշոր փուլով. առաջինն ազատականացման փուլն է, որի ուղղվածությունը ինքնակալական կամ ամբողջատիրական քաղաքական վարչակարգի մեղմացումն է ու ազատական քաղաքական մթնոլորտի ստեղծումը: Երկրորդը՝ բուն ժողովրդավարացման փուլն է, որի նպատակն ու ուղղվածությունը հիմնադրված ինստիտուտների, կառուցվածքների բյուրեղացումն ու ամրապնդումն են[27]:

1990թ հայ ժողովուրդը ակտիվորեն մասնակցեց իշխանությունների ձևավորման գործընթացին, ինչի շնորհիվ իրականացվեց ժողովրդավարության հաստատման հիմնական սկզբունքներից մեկը՝ իշխանությունը ձևավորեց ժողովուրդը, որով և Հայաստանում սկիզբ դրվեց ժողովրդավարության:

---

[26] **Հարությունյան Մ.,** Ավտորիտարիզմից ժողովրդավարությանն անցման շրջանի օրինաչափությունները (Հայաստանի օրինակով), Եր. 2003, էջ 19:
[27] Նույն տեղում, էջ 27:

Ժողովրդի ակտիվ մասնակցությամբ և նրա կողմից իշխանությունների ձևավորման պրոցեսի հիմնական նպատակը ժողովրդի կամքը օրենքի աստիճանի բարձրացնելն ու այն հասարակության բոլոր անդամների համար պարտադիր դարձնելն էր ։ Սակայն, Հայաստանում ժողովրդի կամքն այդպես էլ օրենքի աստիճանի չհաստատվեց։ Իսկ դա նշանակում էր, որ ժողովրդավարությունը չնայած ծնվեց, բայց չհաստատվեց մեզանում։

Ընտրված պատգամավորների մեծամասնությունը՝ ժողովրդից լիազորություններ ստանալով, հրաժարվեցին նրան պատասխանատու լինել և նրա իրավունքներն ու շահերը պաշտպանել։ Ժողովրդի ջանքերով՝ իշխանության գլուխ եկած քաղաքական ուժը, ժողովրդի կամքի փոխարեն՝ իր կամքը բարձրացրեց օրենքի աստիճանի և այն պարտադրեց ժողովրդին։ Իսկ դա արդեն բռնապետության բնորոշ գիծ էր։ Քայլ առ քայլ ժողովուրդը մեկուսացվեց, օտարվեց իշխանություններից։ Գիտակցաբար չէին ընդունվում այնպիսի օրենքներ ու որոշումներ, որոնք հնարավորություն կտային ժողովրդին՝ հսկելու իշխանության գործունեության վրա, չէին մշակվում այնպիսի սկզբունքներ ու մեխանիզմներ, որոնք թույլ կտային հարկ եղած դեպքում իշխանություններին անվստահություն հայտնել։ Ժողովուրդը զրկված էր որևէ կերպ իշխանությունների գործունեության վրա ազդելու հնարավորությունից և անզոր էր որևէ կերպ փոխելու իրերի դրությունը։ Արդյունքը եղավ այն, որ շատ կարճ ժամանակահատվածում ժողովուրդը հիասթափվեց իրենց կողմից ընտրված իշխանությունից։ 1995 թ. ԱԺ ընտրությունների և 1996 թ. նախագահական ընտրությունների ժամանակ, իշխանական ուժերը լավ հասկանում էին, որ իրենց գործունեության հետևանքով չեն արժանանալու ժողովրդի վստահությանը և նախապես պատրաստվել էին այդ ընտրություններին։ Եթե մինչև 1995 թ., անկախ իշխանության գործունեության բնույթից, այսպես թե այնպես ստիպված էինք ընդունել,որ իշխանությունները ձևավորվել են ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան, ապա 1995 թ. ընտրությունների և սահմանադրության հանրաքվեի ժամանակ՝ ժողովրդի մասնակցությունն ու բացասական վերաբերմունքը իշխանախմբի նկատմամբ, ստիպեց իշխանություններին դիմելու բացահայտ կեղծիքների՝ որով սկիզբ դրվեց ոչ ժողովրդավարական սկզբունքներով իշխանությունների ձևավորման գործընթացի։ Հայաստանում սկիզբ դրվեց

պաշտոնական բռնապետության, իսկ սահմանադրությամբ օրինականացվեց այդ բռնապետությունը։

1996 թ. սեպտեմբերյան նախագահական ընտրություններում, ժողովուրդը՝ ոչ է ասում բռնապետությանը, որը բնականաբար իշխանությունների հակաժողովրդական կեցվածքի հետևանքն էր։ Սակայն, վարչակարգը հասցրել էր իր ձեռքում կենտրոնացնել այնպիսի ուժեր ու լծակներ, որոնք պատրաստ էին անգամ ժողովրդի վրա կրակելով՝ ապահովել իշխանության բռնազավթումը։ Նախագահական պաշտոնը զավթելուց հետո, Հայաստանում ավարտվեց բռնապետության հաստատման գործընթացը։ Հայաստանում, անցած տասն տարիների քաղաքական զարգացումները մեկ անգամ ևս առարկայորեն ապացուցեցին այն տեսակետի ճշմարտությունը, որ ամբողջատիրությունից ժողովրդավարության անցումը տեղի է ունենում ավտորիտարիզմի միջոցով։ Ավտորիտարիզմը Հայաստանում ավելի կոպիտ ու բռնի ձևով իրականացվեց։

1996 թ. նախագահական ընտրությունների ընթացքում իշխանության կատարած բացահայտ կեղծիքներն ու ռազմական ուժի գործադրմամբ իշխանության բռնազավթումը, պայմանավորված էր նրանով, որ մի կողմից իշխանություններն էին իրենց գործունեությամբ հեռացել ժողովրդից՝ զրկվելով վստահությունից, դառնալով նրա համար բացարձակ օտար մի մարմին, մյուս կողմից, սոցիալ-տնտեսական ծանր վիճակում հայտնված ժողովրդի հիասթափությունն, դժգոհությունն և քամահրանքն էր օրեցօր խորանում իշխանությունների նկատմամբ։ Այս իրողությունը կարելի է որակավորել որպես պայքար՝ հանուն ժողովրդավարության հաստատման և բնապետության տապալման։

Հայ հասարակության համար ցանկացած խոստում՝ և՛ իշխանությունից և՛ ընդդիմությունից, անիմաստ է, եթե դա չի հանգեցնում ռեակցիոն քաղաքական համակարգի լուծարմանը։ Սեպտեմբերյան ընտրությունների արդյունքների կեղծման և հանրապետությունում ներքին հավասարակշռության խախտման հետևանքով, երկրի շուրջ ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը հետագայում բացասական միտումներ է բացահայտում։

Պարզ է, որ ՀՀ իշխող քաղաքական ուժը, որը նախագահական ընտրություններում ֆիասկո է կրել, չի կարողանա դիմակայել ո՛չ արտաքին քաղաքական ճնշումներին, ո՛չ էլ միջազգային շանտաժին[28]:

1998 թ. փետրվարին, տեղի ունեցավ ՀՀՇ-ական իշխանության հրաժարականը: Ասել, թե դա ժողովրդի համար ցանկալի իշխանափոխություն էր, միանշանակ ընդունելի լինել չի կարող:

Այս քաղաքական իրադրությունների պայմաններում, պետք է իշխանության գան նոր քաղաքական ուժեր՝ նոր ծրագրերով, մոտեցումներով և գործունեության նոր սկզբունքներով, որոնք ընդունակ են լուծելու հասարակության առջև ծառացած առաջնահերթ խնդիրները: Մեզ մոտ դա տեղի չունեցավ, քանզի փոխվել էր ոչ թե իշխանությունը, այլ ընդամենը մի քանի իշխանավորներ: Վերջնականապես վարկաբեկված մի քանի առաջին դեմքերի փոխարինել էին դեռևս այդքան չվարկաբեկված նույն իշխանախմբի երկրորդական դեմքերով, հարազատ մնալով մինչ այդ իրենց որդեգրած գործունեության սկզբունքներին, մտածելակերպին, բարոյականությանը և այլն[29]:

Այսպիսով՝ իրավական (դե յուրե) տեսանկյունից Հայաստանը անցումային փուլ է մտել 1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Հանրապետության գերագույն խորհրդի ընդունած հռչակագրի հիման վրա՝ 1991 թ. սեպտեմբերի 21-ին կայացած անկախության ընդունման հանրաքվեից հետո, երբ վերականգնվեց հայ ժողովրդի անկախ պետականություն ստեղծելու ցանկությունը[30]:

Հայաստանում ամբողջատիրությունից ժողովրդավարության անցման հենց սկզբից իրականացվեց այնպիսի քաղաքականություն, որը կարծես նպատակ ուներ հաստատելու ոչ թե հայտարարված ժողովրդավարությունը, այլ ավտորիտարիզմ, ինչն էլ տեղի ունեցավ, իհարկե զերծ չմնալով նաև ամբողջատիրությանը բնորոշ կառավարման սկզբունքներից: Դրա պատճառները, ինչպես առարկայական, այնպես էլ ենթակայական, բազմաթիվ են:

- Տասնյակ տարիներ ապրելով ամբողջատիրության պայմաններում, ժողովրդին անհրաժեշտ էր որոշակի ժամանակ և հստակ մշակված քաղաքական ծրագրեր, որոնց

---

[28] **Շիրինյան Լ.**, - Հայաստան. Իրականության և արարչագործության սահմանագծին.
[29] **Պետրոսյան Ռ.,** նշ. աշխ., էջ 187-190:
[30] **Պետրոսյան Ռ.,**Նշ. աշխ.,էջ 198:

իրագործումը հնարավորություն կընձեռներ անցումային հասարակության հիմնական խնդիրները լուծել։

- Հեղափոխությունների արդյունքում սովորաբար իշխանության են գալիս կամ ազգային հայրենասեր ուժեր, որոնք առաջնորդվելով՝ ազգային-պետական շահերով, իշխանության լծակներն օգտագործում են պետության կայացման համար, եթե դրա կարիքը կա, ընտրելով՝ տվյալ ժողովրդի զարգացման մակարդակին, նրա ավանդույթներին, առանձնահատկություններին համապատասխանող և ընդունելի քաղաքական համակարգի ձևավորման ուղին։
- Ամբողջատիրությունից ժողովրդավարության անցման ժամանակ ամենակարևորագույն գործընթացը սեփականաշնորհումն է։ Դրանից է կախված, թե՛ պետականության կայացման հնարավորությունը, և թե՛ հայտարարված ժողովրդավարության հաստատման հնարավորությունները։
- Նշված ժամանակաշրջանում իշխանությունների գործելաոճը, որը հենված էր՝ օրենքների շրջանցման, անպատժելիության, հովանավորության, պետական հաստատությունները սեփական շահերի նպատակահարմարությամբ օգտագործելու սկզբունքի վրա, անհետևանք մնալ չէր կարող։
- Հայաստանում կար կուսակցական շահերի խմբեր, խմբավորումներ։ Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս փոքրիկ հանրապետությունում այսչափ կուսակցությունների առկայության պայմաններում հասարակական քաղաքական դաշտը պետք է որ լրիվ զբաղված լիներ։ Այսինքն, հասարակության բոլոր շերտերի շահերը, կարծես թե, ներկայացված են։ Սակայն, դիտարկումները ցույց են տալիս, որ դա բնավ էլ այդպես չէ։

Հայ ժողովուրդը, (2018թ. ապրիլի 23-ին) մերժելով նախկին վարչակարգը, փաստացի մերժեց նաև ղեկավարման ավտորիտար մեթոդները, որոնք երկրում արմատավորել էր երկար տարիներ իշխող ՀՀԿ-ն։ Հայ հասարակությունը դրսևորեց ժողովրդավարական ճանապարհով զարգանալու կամք և դժկամություն՝ երրորդ անգամ տեսնելու նույն մարդուն երկրի ղեկավարի պաշտոնում[31]։2018 թվականի մայիսի 2-ին, համահայկական ընդվզում է գործադրվում՝ ցույցերի միջոցով։

[31] **Գրիգորյան Ս.,**Հայկական թավշյա հեղափոխություն, Եր. Էդիթ Պրինտ, 2018թ. էջ 29։

Նախքան ՀՀ-ում իրականացված Թավշյա հեղափոխությունը (2018 թվականի ապրիլի 23-ը) երկիրը կառավարվում էր ավտորիտար քաղաքական վարչակարգին բնորոշ քաղաքականությանբ: Խեղաթյուրված էր ընտրական ինստիտուտը, ստեղծվել էր թվացյալ մասնակցություն՝ քաղաքական գործընթացներին, սակայն քաղաքացիները իշխանության ձևավորման գործընթացում չունեին սեփական մասնակցությունը: Օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները պետք է տարանջատված լինեին քաղաքական իշխանությունից, սակայն գործնականում տեղի է ունեցել կուսակցականացման գործընթաց, որի արդյունքում ստեղծվել էր հետևյալ պատկերը՝ քաղաքական դաշտում դրսևորվում էր կուսակցական գաղափարախոսության անթույլատրելի դրսևորումներ: ՀՀ-ում տեղի էր ունենում քաղաքական ընդդիմության օտարում պետաիշխանական լծակներից: ՀՀ-ը լինելով ժողովրդավարական երկիր, փաստացի չէր իրացնում քաղաքացիների հիմնական իրավունքները: Այդ իրավունքները ձևականորեն առկա էին, սակայն դրանք կյանքի չէին կոչվում: Այս ամենը թույլ է տալիս եզրահանգել, որ Հայաստանում նախքան Թավշյա հեղափոխությունը գործում էր ավտորիտար վարչակարգ, որն ուներ ժողովրդավարության ձևական բոլոր ատրիբուտները[32]:

Այսպիսով՝ 1990-1998թթ. ՀՀ-ում ավտորիտար վարչակարգ էր հաստատված: Ավտորիտարիզմի դրսևորումները՝ բռնի կերպով էին կատարվում: Հայ ժողովուրդը, բազմիցս ապստամբում էր գործող վարչակարգի դեմ, սակայն, իշխանախումբը իր ձեռքում էր կենտրոնացրել ողջ իշխանությունը: 2018թ. ապրիլի 23-ին, հայ ժողովուրդը, իրականացրեց Թավշյա Հեղափոխությունը, որը ամբողջությամբ փոխեց քաղաքական իրականությունը:

[32] https://hetq.am/hy/article/93750(18.04.2020թ.)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, եթե ամփոփենք հետազոտական աշխատանքի արդյունքում կատարված դիտարկումները, հստակ կարող ենք ձևակերպել հետևյալ եզրահանգումները.

- Քաղաքագիտության մեջ իր վճռորոշ տեղն ու դիրքն է ունեցել և ունի քաղաքական վարչակարգ հասկացությունը: Քաղաքական վարչակարգերի ընտրությունը հստակ ուրվագծվում է քաղաքական մի շարք ընթացակարգերում՝ քաղաքական բազմակարծությամբ, քաղաքական որոշումների ընդունման կարգով, ընդդիմության հետ հարաբերությունների բնույթով:
- Ավտորիտար վարչակարգը հասարակական-քաղաքական այնպիսի համակարգ է, որտեղ քաղաքական իշխանությունն իրականացվում է կոնկրետ մի անձի կամ կուսակցության, էլիտար փոքր խմբի կողմից՝ ժողովրդի նվազագույն մասնակցության պայմաններում: Ավտորիտարիզմի բնորոշ գծերն են՝ իշխանության բարձր կենտրոնացվածություն, հասարակական կյանքի շատ կողմերի պետականացում, ղեկավարման վարչա-հրամայական մեթոդ, ժողովրդի օտարում իշխանություններից, իրական քաղաքական ընդդիմություն թույլ չտալ, մամուլի ազատության սահմանափակում: Չկա իշխանության իրական տարանջատում օրենսդիր, գործադիր, դատական թևերի, չնայած ձևականորեն այդ բոլոր մարմինները գոյություն ունեն: Սահմանադրությունը դեկլարատիվ բնույթ ունի (այսինքն՝ կա, բայց չի գործում): Ընտրությունները ցուցադրական-ձևական բնույթ ունեն, ընտրության արդյունքը կանխորոշված է, այն չի կարող ազդել քաղաքական վարչակարգի բնույթի վրա:
- Ժողովրդավարություն՝ ժողովրդի իշխանություն, պետության կառավարման ձև, որտեղ ժողովուրդը համարվում է սուվերեն (ինքնիշխան), ճանաչվում են քաղաքացիների իրավահավասարությունը, պետական իշխանության հիմնական մարմինների ընտրովիությունը և մարդու իրավունքներն ու ազատությունները: Ժողովրդավարական իշխանության այնպիսի ձև է, որը բնորոշվում է ժողովրդի կամքի դրսևորման ազատությամբ, օրենքների գերակայությամբ, օրենքի առաջ բոլորի հավասարությամբ, սոցիալական արդարության սկզբունքի առկայությամբ: Այս վարչակարգին հատուկ է հասարակական կարծիքի ուսումնասիրության հիման վրա որո-

շումներ ընդունելը, ընտրական համակարգի փակ, գաղտնի քվեարկության սկզբունքը կիրառելը, գործադիր իշխանության ինքնուրույնությունը երաշխավորելը։ Ժողովրդավարական վարչակարգը իրավունք է ընձեռում քաղաքացիներին՝ քննադատելու իշխանության ներկայացուցիչներին և դատի տալ նրանց անօրինական գործողությունների համար։

- Ժողովրդավարացումը քաղաքական գործընթացի տեսակներից մեկն է, որը դարձել է մեր ժամանակների հետազոտողների ակտիվ ուսումնասիրության առարկան։ Դա բացատրվում է նրանով, որ վերջին տասնամյակները բնութագրվում են ավտորիտար վարչակարգի փլուզումով և ժողովրդավարական կարգերի հաստատման փորձերով՝ աշխարհի բազմաթիվ երկրներում։
- Իրավական (դե յուրե) տեսանկյունից Հայաստանը անցումային փուլ է մտել 1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Հանրապետության գերագույն խորհրդի ընդունած հռչակագրի հիման վրա՝ 1991 թ. սեպտեմբերի 21-ին կայացած անկախության ընդունման հանրաքվեից հետո, երբ վերականգնվեց հայ ժողովրդի անկախ պետականություն ստեղծելու ցանկությունը։ 1990 թ. մինչ 2018 թ., ՀՀ-ում հաստատված էր ավտորիտար վարչակարգ։ Հայ ժողովուրդը, (2018թ. ապրիլի 23-ին), մերժելով նախկին վարչակարգը, փաստացի մերժեց նաև ղեկավարման ավտորիտար մեթոդները, որոնք երկրում արմատավորել էր երկար տարիներ իշխող ՀՀԿ-ն իր կոալիցիոն գործընկերներով։ Հայ հասարակությունը, դրսևորեց ժողովրդավարական ճանապարհով զարգանալու կամք և դժկամություն՝ լութոկրատների իշխանությունից։

Ստորև նշված են մի շարք առաջարկություններ առ այն, թե ինչպես, ի՞նչ ճանապարհով և ինչպիսի ընթացակարգերով՝ հաստատել ժողովրդավարական քաղաքական վարչակարգ այն երկրներում, որտեղ հաստատված է ավտորիտարիզմ։

- Ավտորիտար վարչակարգի տապալման համար անհրաժեշտ է համախմբված գործել և առաջին հերթին իշխանափոխություն իրականացնել, որի արդյունքում քաղաքական դաշտից դուրս կմղվեն այն քաղաքական գործիչները և շահերի խմբերը, ովքեր հաստատել են ավտորիտար վարչակարգ։
- Խրախուսել և աջակցել այն նախաձեռնությունները, որոնք հետապնդում են հետևյալ նպատակները՝ ամեն կերպ արթնացնել հասարակության ազատության և հավասարության իրավունքի զգացումը, ժողովրդավարական գաղափարներով, սկզ-

բունքներով՝ բարձրացնել հասարակության ազգային քաղաքական ինքնագիտակցությունը։

- Այնպիսի Սահմանադրություն մշակել և ներկայացնել Կառավարությանը, որտեղ հանգամանալից ներկայացված կլինի ժողովրդավարական սկզբունքներով ապրելու հրատապությունը և կարևորությունը։ Եվ այդ Սահմանադրությունը թույլ կտա անհրաժեշտության դեպքում միջամտել քաղաքական վարչակարգի կենսագործմանը։
- Պարբերաբար հանդիպումներ կազմակերպել ընդդիմադիր իշխանության հետ՝ աջակցություն ակնկալելով ժողովրդավարական վարչակարգ հաստատելու գործում, անհրաժեշտության դեպքում. բողոքի ալիք բարձրացնել՝ հասարակության պահանջները, և ցանկությունները լսելի դարձնելու համար։
- Ժողովրդավարական հասարակություն կառուցելու փորձերի ձախողումները՝ մշտապես կեղծվող ընտրություններն են, համակարգային կոռուպցիան, (ինչպես տասնյակ տարիներ շարունակ իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում), որպես առաջարկ կարող ենք նշել՝ մարդկանց պարտադիր մասնակցությունը ընտրություններին, հակառակ պարագայում՝ վարչական պատասխանատվության ենթարկում (ինչպես իրականացվում է Իտալիայում), այս կերպ՝ ապահովելով մեծամասնության մասնակցությունը ընտրություններին՝ կկանխվի նրանց ձայնը կեղծելու գործընթացը։
- ԶԼՄ-ները գործող օրենքի շրջանակներում պետության շահը առաջարկեն՝ միևնույն ժամանակ իրենց անկախությունը և օբյեկտիվությունը պահպանելով։ Շատ հաճախ իշխանությունը լրատվամիջոց չունի, որպեսզի հասարակությանը իրազեկի քաղաքական գործընթացների մասին, այդ լիազորությունը վստահված է զանգվածային լրատվամիջոցներին, որոնք շատ հաճախ ճշմարիտ տեղեկատվության փոխարեն ներկայացնում են այն, ինչը չի համապատասխանում իրականությանը, և տարածում են ուռճացված հրապարակումներ։ Առաջարկում ենք պատասխանատվության ենթարկել ԶԼՄ-ներին՝ անբարեխիղճ աշխատանքի և կեղծ տեղեկատվություն տարածելու համար։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏ

1. ՀՀ Սահմանադրություն 1995թ. Հուլիսի 5 . 2015թ (դեկտեմբեր 6):

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ալեքսանյան Ա., Արևմտյան ժողովրդավարությունների քաղաքական համակարգեր, տեսություն և արդիականություն, Երևան, 2009:

2. Աղայան Ա., Հայաստանի քաղաքական համակարգի զարգացման հիմնախնդիրները, Երևան, 2003:

3. Գրիգորյան Ս., Հայկական թավշյա հեղափոխություն, Երևան, Էդիթ Պրինտ, 2018:

4. Դահլ Ռ., Ժողովրդավարության սահմանները և հնարավորությունները, Երևան, 2006:

5. Հարությունյան Մ., Ավտորիտարիզմից ժողովրդավարությանն անցման շրջանի օրինաչափությունները (Հայաստանի օրինակով), Երևան, 2003:

6. Ղահրամանյան Կ., Քաղաքագիտություն, բուհական դասագիրք , Երևան, 2005:

7. Մանուկյան Ա., Ժամանակակից քաղաքական գործընթացներ, Երևան, 2011:

8. Պետրոսյան Ռ., Քաղաքագիտություն, Երևան, 2004:

9. Քաղաքագիտություն, ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Եր. 2006:

10. Շիրինյան Լ., Օրդուխանյան Է., Սուքիասյան Հ., Քաղաքագիտություն (ուսումնամեթոդական ձեռնարկ)/.- Եր., 2016:

11. Мельвиль А. Ю., [и др.]. - Политология: учеб./: Московский государственный институт международных отношений (Университет) МИД России, ТК Велби, Изд-во Проспект, М. 2008.

12 Соловьев А.И., Политология: Политическая теория, политическиетехнологии: Учебник для студентов вузов. М.: Аспект Пресс, 2003.

13 Comparing Political Regimes: A Thematic Introduction to Comparative Politics, Alan Siaroff, University of Toronto Press, 2009.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔԷՋ

14. (https://hy.wikipedia.org/wiki/%D5%8C%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A2%D5%BC%D5%B6%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6) (24.04.2020թ.)

ՀՈԴՎԱԾ

15. Սարգսյան Ա., «Ժողովրդավարական համախմբում» հասկացության քաղաքագիտական մեկնաբանության շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2018, № 2 (26)։